

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՍԱՆԴՐՈՅԻ

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ**

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Հ. Պետրոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Ա. Մարդոյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լ. Խ. Հայրապետյան**

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թ. դեկտեմբերի 16-ին ժամը 14:00 Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0025, ք. Երևան, Աբովյան 52^ա, Երևանի պետական համալսարանի 8-րդ մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թ. նոյեմբերի 4-ին:

Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ



Ա. Փ. Ղազարյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ կրթության համակարգում օտարերկրացի ուսանողների թվի անընդհատ ավելացմամբ, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման, օտարերկրյա քաղաքացիների կրթության հետ կապված խնդիրների բացահայտման անհրաժեշտությամբ, օտարերկրացիների՝ Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման գործընթացում լեզվի գործնական-կիրառական, ճանաչողական ու մշակութային նշանակությամբ:

Կարևորվում է հատկապես Հայաստանի կրթական և սոցիալ-մշակութային միջավայրում հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման հիմնախնդիրը: Այդ համատեքստում խնդիր է դրվում բացահայտել, հայերենի յուրացման հետ կապված դժվարությունները, հայերենի ուսուցման մանկավարժական պայմանները և ուղիները:

Լեզուն հաղորդակցության միջոց է, և ինչքան էլ տարբերվեն բուհերի օտարերկրացի ուսանողների մասնագիտական նպատակները, դրանք կարող են համընկնել սոցիալ-մշակութային համատեքստում:

Օտարերկրացի ուսանողների հաղորդակցական դժվարությունները հայաստանյան սոցիալ-մշակութային միջավայրում վկայում են կրթության բովանդակության և ընդհանուր ծրագրային փոփոխությունների անհրաժեշտության մասին:

Չնայած հայերենը՝ որպես օտար լեզու ուսուցման քնազավառում որոշակի աշխատանքներ են կատարվել, սակայն ժամանակակից սոցիալ-մշակութային պայմաններում առկա խնդիրները պայմանավորված են մի շարք գործոններով, ինչպիսիք են՝

- հայերենը՝ որպես օտար լեզու ուսուցման առանձնահատկությունների վերաբերյալ համակարգային վերլուծությունների բացակայությունը,
- բուհերի օտարերկրացի ուսանողների՝ հայերենի միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման վերաբերյալ հետազոտությունների ոչ բավարար քանակը,
- բարձրագույն ուսումնական հաստատություններում հայերենը՝ որպես օտար լեզու սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման ու գնահատման միասնական համակարգի և չափորոշիչների բացակայությունը,

- նշված ոլորտում գիտահետազոտական աշխատանքների, ուսումնական ծեռնարկների, տեղեկատու նյութերի, տարբեր կրթական ռեսուրսների սահմանափակ լինելը,
- ուսումնական հաստատությունների միջև համագործակցության բարելավման անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը: Բացահայտել հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման գործընթացում օտարերկրացի ուսանողների ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման առանձնահատկությունները, օրինաչափությունները, դժվարությունները և հնարավոր լուծումներ առաջադրել նրանց հաղորդակցական, հանրամշակութային, միջմշակութային կոմպետենցիաների զարգացման համար:

Ըստ հետազոտության նպատակի՝ սահմանվել են հետևյալ **խնդիրները՝**

1. ուսումնասիրել արտասահմանցի ուսանողների ակադեմիական. սոցիալական, հոգեբանական հարմարման, նրանց մշակութայնացմանը վերաբերող գիտատեսական գրականություն,
2. բացահայտել հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման/ ուսումնառության միջավայրի առանձնահատկությունները հայաստանյան սոցիալ-մշակութային համատեքստում՝ միջմշակութային և հաղորդակցական հմտությունների զարգացման տեսանկյունից,
3. իրականացնել սոցիոլոգիական հարցում ՀՀ սովորող օտարերկրացի ուսանողների շրջանում հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման մարտահրավերներն ու հայկական սոցիալ-մշակութային միջավայր ինտեգրման վերաբերյալ նրանց ընկալումները, պատկերացումները բացահայտելու նպատակով,
4. ստեղծել Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ինտեգրման դինամիկ մոդել:

Հետազոտության գիտական նորույթը.

- Բացահայտվել են ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով ինտեգրման առանձնահատկությունները,
- ստեղծվել է Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ինտեգրման դինամիկ մոդելը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները՝

1. Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով արտասահմանցի ուսանողների ինտեգրման գործընթացը դիտարկվում է կազմակերպչական, բուն կրթական,

ուազմավարական, տեխնոլոգիական, գնահատման մակարդակներում: Բարձրագույն կրթության կազմակերպիչներն ու դասավանդող դասախոսները պետք է համագործակցեն բոլոր նշված մակարդակներում:

2. Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով ինտեգրման մանկավարժական պայմանների ապահովումը ենթադրում է նախ և առաջ դասախոսների շարունակական վերապատրաստում, նոր կրթական տեխնոլոգիաների ներմուծում, կրթական ռեսուրսների բարելավում:

3. Հայերենի որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման մանկավարժական պայմանները մշակելիս, պետք է հաշվի առնել ոչ միայն Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրի, այլև արտասահմանցի ուսանողների մշակութայինացման առանձնահատկությունները:

4. Արտասահմանցի ուսանողների լիարժեք մշակութայինացման, միջմշակութային ինտեգրման համար անհրաժեշտ է ապահովել ինտեգրում ուսումնասիրվող լեզվի իմացության, ակադեմիական և սոցիալական հարմարման, սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման մակարդակներում: Ընդ որում, առանց լեզվի իմացության անհնար է պատկերացնել սոցիալ-մշակութային միջավայրի ինտեգրումը, քանի որ թիրախային լեզվի միջոցով սոցիալականացումն է մշակութայինացման բանալին:

Հետազոտության տեսական նշանակությունը:

1. Դասակարգվել և մեկնաբանվել են հայերենի՝ որպես օտար կամ երկրորդ լեզվի ուսուցման ոլորտի մանկավարժական, մասնավորապես դիդակտիկական հիմնախնդիրները:

2. Հիմնավորվել է օտարերկրացիներին հայերենի՝ սոցիալ-մշակութային մոտեցմամբ ուսուցման անհրաժեշտությունը հաղորդակցական, միջմշակութային կոմպետենցիաների զարգացման տեսանկյունից:

3. Բացահայտվել են հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման առանձնահատկություններն առկա և առցանց կրթական միջավայրերում՝ սոցիալ-մշակութային համատեքստի տեսանկյունից:

4. Մշակվել է հայերենը՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով արտասահմանցի ուսանողների՝ Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու դինամիկ մոդելը:

Հետազոտության գործնական նշանակությունը:

1. Հետազոտության նյութերը կարող են օգտագործվել մասնավորապես՝ հայերենը՝ որպես օտար լեզու դասավանդողների, ոլորտի շահագրգիռ անձանց կողմից՝ օտարերկրացիների՝ Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայր ինտեգրման և հայերենի ուսուցման մարտահրավերների շուրջ ընդհանուր պատկերացում կազմելու առումով: Իսկ ընդհանուր առմամբ, աշխատանքը կարող է օգտակար լինել բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են սոցիալ-մշակութային համատեքստում օտար կամ երկրորդ լեզվի յուրացման վերաբերյալ միջազգային հետազոտական փորձով, միջազգային ուսանողների մշակութայինացմանը վերաբերող հարցերով:

2. Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ բուհերում ուսումնառող այլազգի և սփյուռքահայ ուսանողների հայերենի ուսուցման գործընթացի **արդյունավետության բարձրացման**, ուսումնական ծրագրերի, օրացուցային պլանների, դասանյութերի մշակման գործում, **դասավանդողներին՝** ուսուցման գործընթացում կանխարգելման ռազմավարություններ առաջարկելու առումով, հայերենը՝ որպես օտար լեզու **ուսուցանողներին վերապատրաստելու և ոլորտի զարգացման ռազմավարություն** մշակման գործում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 12 աղյուսակից, 4 գծապատկերից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 128 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Լեզուն եվ մշակույթը՝ որպես սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման միջոց», բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Ուսուցման/ուսումնառության սոցիալ-մշակութային տեսությունները և դրանց կիրառումն օտար լեզվի ուսուցման գործընթացում», հանգամանորեն ներկայացվում և վերլուծվում են ուսուցման/ուսումնառության սոցիալ-մշակութային տեսությունները, մասնավորապես «անձի զարգացման մերձակա գոտի» «հաջողված ուսումնառություն», «աջակցություն», «միջնորդություն», «ներքինացում», «գործունեության տեսություն» հասկացությունները: Ներկայացվում են սոցիալական հարմարման գործոններն ու գործիքները, Ռ. Թարպի ու Ռ. Գալիմորի առաջադրած «Կարգավորման քառափուլ մոդելը»: Նշվում է, որ օտար լեզվի յուրացումը կամ ներքինացումը, տեղի է ունենում միջհոգեբանական և ներհոգեբանական հարթություններում սոցիալական փոխգործակցության արդյունքում:

Գծապատկեր 1:

ԱԶՄԳ-ՈՒՄ ԸՆԹԱՅՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՔԱՌԱՓՈՒԼ ՄՈԴԵԼԸ

[Ռ. Թարպի և Ռ. Գալիմոր: 1988]



Գծապատկեր 1-ում ներկայացված է Լ. Վիգոտսկու «Երկու հարթության» գաղափարը մարմնավորող Ռ. Թարպի ու Ռ. Գալիմորի առաջադրած «Կարգավորման քառափուլ մոդելը»: Այն ներկայացնում է մտավոր պատկերը, թե ինչպես է սովորողը այլ մարդկանց հետ փոխգործակցելու համար օգտագործում գործիքներ (լեզու, տեխնոլոգիաներ) և այլոց կարգավորումից անցնում ինքնակարգավորման:

Առաջին փուլում «Գիտակը» կարող է կարգավորել սովորողի վարքագիծը՝ նրան ուղղորդելով կամ մոդել հանդիսանալով նրա համար: Այսպիսով, սովորողը ի սկզբանե սահմանափակ պատկերացում ունի ուսուցման նպատակների կամ իրավիճակների մասին և աստիճանաբար գիտակցում է առաջադրանքի էությունն ու կապերը: Հետևաբար, էական է ուսումնառության գործընթացում զրոյցի, հարցման և հետադարձ կապի, բացատրության առկայությունն առաջադրանքի ամբողջ կատարման ընթացքում, որպեսզի, ի վերջո, սովորողը դառնա պատասխանատու իր իսկ ուսումնառության համար:

Ուսումնառության երկրորդ փուլում ինքնավերահսկման ու կարգավորման մեծացման պայմաններում սովորողը սկսում է ինքն իրեն ուղղորդել իր գործողությունների մեջ: Ինքն իր հետ խոսելու միջոցով (լուռ խոսքն ինքն իր հետ կամ մենախոսություն), սովորողը կարողանում է ինքն իրեն ղեկավարել՝ որոշակի հմտության և գիտելիքի ձեռքբերման համար սեփական ԱԶՄԳ-ին հասնելու համար: Երրորդ փուլում կատարումը «ներքինացված և ավտոմատացված» է, ուստի չի պահանջում այլ մարդկանց օգնություն: Այնուամենայնիվ, օգնությունն այս փուլում կարող է խանգարել երբեմն: Այս երեք փուլերը ներառված են նոր հմտությունների և կարողությունների սովորելու ընթացքում: Չորրորդ փուլի միայն սկզբում սովորողները միգուցե զգան որոշակի աջակցության կարիք՝ առաջադրանքի կատարումը լավացնելու համար:


1-ին փուլը՝ առարկաներով կարգավորումը (object regulation) նախորդում է զարգացման ինքնակարգավորման «մասնավոր խոսքին»: Առաջին փուլում հարցադրումը կարող ենք ձևակերպել այսպես. «Ի՞նչ է սա»: 2-րդ փուլը՝ ուրիշների կարգավորումը (other-regulation) նպատակաուղղված առաջադրանքներում ենթադրում է չափահասների ուղղորդում/օգնությունը, որից կախված են սովորողները: Այս փուլում հարցադրումը կլինի այսպես. «Ինչպե՞ս: Թող օգնեմ...»:

3-րդ՝ վերջնական փուլը՝ ինքնակարգավորումը (self-regulation) ենթադրում է, որ սովորող առաջադիմում է այնքան, որ կարողանում է առաջադրանքի հետ կապված դժվարությունները լուծել ինքնուրույն՝ առանց կախված լինելու որևէ մեկից կամ շրջապատից: Հարցադրումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

«Լավ, հիմա ես գիտեմ»: Այս փուլում է ձևավորվում մասնավոր խոսքը (Private speech), որը տիրապետման ցուցիչ է [McCafferty1994: 119, ցիտ. ըստ Վերչի հղումի]:

Գծապատկեր 2:


**«ԱՁՄԳ» ԵՎ «ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻ»
ՓՈԽՆՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
[Վան Լիեր 1996: 190]



Նշվում է նաև, որ ԱՁՄԳ-ի շրջանակից դուրս նյութերը կամ գիտելիքները մատչելի չեն սովորելու համար: Սակայն սովորողի «ինքնակարգավորման գոտին» կարող է ընդլայնվել, եթե նրան տրամադրվեն համապատասխան և հավասարակշռված ռեսուրսներ՝ ԱՁՄԳ-ի շրջանակում գիտելիք կերտելու համար: Գծապատկեր 3-ում տրված են այդ ռեսուրսները:

«ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՏԻՆ» ԸՆԴԱՅՆՈՂ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

[Կառ Պ.-Լ., 2010: 127]



Երկրորդ ենթագլխում՝ «Լեզվի և մշակույթի կապը օտար լեզվի յուրացման գործընթացում», ներկայացվում են օտար լեզվի մշակույթի ուսուցման մոտեցումները, լեզվի ուսուցման և ուսումնառության ռազմավարությունները, անհատականության ձևավորման գործոնները, սահմանվում են «մշակույթ», «մեծ մշակույթ», «փոքր մշակույթ», «մշակութային ցնցում», «մոտիվացիա» հասկացությունները: Երկրորդ լեզվի ուսուցմանը, ուսումնառությանը և յուրացմանը նվիրված հետազոտություններից առանձնացվում են Զ. Շումանի՝ «Մշակութայնացման մոդելը» և Ս. Քրաշենի՝ «Երկրորդ լեզվի յուրացման» տեսությունը:

Երրորդ ենթագլխում՝ «Սոցիալ-մշակութային գործոններն ու սոցիալ-մշակութային համատեքստն օտար լեզվի ուսուցման գործընթացում», ներկայացվում են սոցիալական համատեքստ» հասկացությունը, այն ձևավորող գործոնները, մոդելավորվում են լեզվակիրներին բնորոշ լեզվական իրադրություններն ակադեմիական երկրորդ լեզվի ուսուցման գործընթացում: Սահմանվում է «հաղորդակցական դասարան» հասկացությունը, ներկայացվում է

լեզու սովորողների սոցիալականացման և ինտեգրման գործընթացի նախապատրաստական փուլը:

Երկրորդ գլուխը՝ «**Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսումնասիրության միջավայրի առանձնահատկությունները**» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Արտասահմանցի ուսանողների հոգեբանական, սոցիալական և ակադեմիական հարմարումը», ներկայացվում են արտասահմանցի ուսանողների մշակութայնացմանը վերաբերող աշխատանքները, մշակութայնացման գործընթացի մոդելը, միջմշակութային հարմարման տիրույթները, սթրեսի հաղթահարման, մշակութայնացումը խթանող տարբեր ռազմավարությունները, հոգեբանական, ակադեմիական և սոցիալական հարմարման, վերասոցիալականացման դրսևորումները, վերլուծվում են Ս. Բուխների՝ «Բարեկամության ցանցերի գործառական», Վ. Տինտոյի՝ «Ուսանողների ներգրավվածության կամ փոխազդեցության» մոդելները, որոնք ներկայացնում են ուսանողների հոգեբանական, սոցիալ-մշակութային, վարքագծային ինտեգրումը դյուրացնող սոցիալական աջակցության առանձնահատկությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «**Օտարերկրացի ուսանողների մշակութայնացումը և հայերենի դասավանդման առանձնահատկությունները Հայաստանի սոցիալ-մշակութային համատեքստում**», ներկայացվում է օտարերկրացիների հայերենի ուսուցման գործընթացը, խորհրդային, հետխորհրդային և ժամանակակից փուլերը, տարբեր ուսումնական հաստատություններում կազմակերպած հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման գործընթացները, հանգամանորեն բնութագրվում են շրջանառության մեջ գտնված և գտնվող ծրագրերը, հստակեցվում են հայերենը որպես երկրորդ կամ օտար լեզու դասընթացի կազմակերպման պահանջներն ու սկզբունքները:

Երրորդ ենթագլխում՝ «**Հայկական սոցիալ-մշակութային գործոնի դերը՝ օտարերկրացի ուսանողների մշակութայնացման, մոտիվացիայի և մտածողության ձևավորման գործում**», ներկայացվում են մշակութայնացման գործոնները, մշակութային փոխներթափանցման դրսևորումները, հայերեն սովորելու շարժառիթները, **հայերենի** լեզվամտածողության զարգացման ուղիները: Նշվում է, որ Հայաստանյան սոցիալ-մշակութային միջավայրը կարևոր գործոն ու խթան է ոչ միայն լեզվակիրների հետ ամենօրյա հաղորդակցության, լեզվական գիտելիքների ամրապնդման, լեզվակիրների մտածողության ըմբռնման, հաղորդակցական հմտությունների բարելավման, այլև լեզվի յուրացման մոտիվացիայի պահպանման, երկրի նկատմամբ բարենպաստ վերաբերմունքի առումով:

Երրորդ գլուխը՝ «Օտարերկրացի ուսանողների ՀՀ սոցիալ-մշակութային միջավայր լեզվի միջոցով ինտեգրման բնագավառում առկա հիմնահարցերի բացահայտումը», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հիմնախնդրի վերաբերյալ հարցազրույցների արդյունքների վերլուծություն», ներկայացվում են ՀՀ բուհերում օտարերկրացի ուսանողների հայերենի ուսուցման գործընթացի, բուհում նրանց ակադեմիական ու սոցիալական հարմարման, Հայաստանում հայերեն ուսումնառողների մշակութայնացման փորձառության վերաբերյալ հարցազրույցի արդյունքները: Հարցազրույցի մասնակիցների կողմից հայերենը արժևորվում է և՛ որպես ուսումնառության ու մասնագիտական լեզու, և՛ որպես Հայաստանին մշակութայնացման գլխավոր միջոց: Ներկայացվում են նաև ֆասիլիտացիայի տեխնոլոգիան, բուհական միջավայրում ակադեմիական սթրես առաջացնող գործոնները:

Երկրորդ ենթագլխում՝ «Օտարերկրացի ուսանողների հայերենի ուսուցման արդյունավետության վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն», ներկայացվում է սոցիալական հարցաթերթը, որը կազմվել է հինգ բաժնից՝ «Ընդհանուր տեղեկություններ», «Կրթական տեղեկություններ», «Ուսումնական հաստատություն», «Դասընթաց» և «Հարմարում»: Սոցիալական միջոցով ուսումնասիրվել են ուսումնառողների՝ նախընտրելի հաղորդակցական կրթական տեխնոլոգիաները, նրանց տեսակետները հայերենի հաղորդակցական հմտությունների զարգացումը խթանող կամ խոչընդոտող գործոնների, հայերեն սովորելու ընդհանրական դժվարությունների ու դրանց լուծումների վերաբերյալ: Ներկայացվում են ակադեմիական և սոցիալ-մշակութային հարմարման գործընթացին նպաստող գործոններն ու դժվարությունները: Սոցիոլոգիական հարցումը փաստում է ուսանողների կողմից հայերեն ուսուցանող առկա տպագիր և առցանց ռեսուրսների հասանելիության, դրանց տեղեկացվածության և օգտագործման ցածր աստիճանը, գնահատման միասնական համակարգի բացակայությունը: Նշվում է, որ լեզու սովորելու ձևավորված մոտեցումները չեն կարող ցանկալի արդյունք տալ, եթե բուհում հայերենի դասընթացին հատկացված ժամաքանակը բավարար չէ: Կարևորվում է լեզվական բոլոր հմտությունների համաժամանակյա զարգացումը՝ դասաժամերի ավելացման միջոցով: Սոցիոլոգիական հարցման պատասխանների արդյունքները հաստատում են այն պնդումը, ըստ որի՝ Հայաստանի սոցիալ-մշակութային ինտեգրման ամենակարևոր և ամենաբարդ հիմնախնդիրները լուծվում են սոցիալական ու լեզվական հարթություններում: Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրի հարմարման գործընթացը

պահանջում է մշակութային գործունեության և թիրախային երկրի լեզվակիրների՝ տեղացիների ինչպես անվար, այնպես էլ կազմակերպված հաղորդակցություն: Ակնհայտ է, որ վերջինս վերաբերում է կրթական ոլորտին:


Երրորդ ենթագլխում՝ «**Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման մոդել**», ընդհանուր գծերով ներկայացվում է սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման մոդելը: Վերլուծվում են հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման շրջանառվող դասագրքերը: Դասակարգվում են դասագրքաստեղծման հիմնական սկզբունքները, հայերեն բնագրերի ընտրության չափանիշները: Շրջանառվող և ստեղծվող հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման դասագրքերի սկզբունքները հիմնավորելիս կարևորվում է Եվրասիոստրուկտուրայի լեզվական համակարգի շրջանակներում գործող լեզուների իմացության ընդհանուր սանդղակը: Համապատասխան վերլուծության արդյունքում առաջարկվում է հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով ՀՀ սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրվելու դինամիկ, դիդակտիկական մոդելը: Վերլուծվում են նրա հիմնական, մասնավորապես կազմակերպչական, կրթական, տեխնոլոգիական, գնահատման, ռազմավարական բաղադրիչները:

Դասագրքաստեղծման կոմպետենտային, սոցիալ-մշակութային, հանրալեզվաբանական և այլ մոտեցման կիրառման արդյունքում անհրաժեշտ է շարունակաբար բարելավել հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի դասագրքերի որակը, հաշվի առնելով արտասահմանցի ուսանողների ճանաչողական, հեռանկարային պահանջմունքները, մանկավարժական տեխնոլոգիաների զարգացման միտումները, ինչպես նաև հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

Առաջարկվող մոդելը դինամիկ է, քանի որ կարելի է այն կիրառել թե՛ մասնագիտական, թե՛ մասնագիտական կողմնորոշման դասընթացներում:

**Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով
ՀՀ սոցիալ մշակութային միջավայրին ինտեգրման դինամիկ մոդել**

Գծապատկեր 4



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. «Հայերենի՝ որպես օտար լեզվի» դասավանդումը պետք է դիտարկվի ոչ թե զուտ համալսարանական առարկա, այլ օտարերկրացի ուսանողների սոցիալական ինտեգրման առաջնային գործիք՝ լսարանային և արտալսարանային աշխատանքներով: Դասավանդողի առաքելությունը հայերենի միջոցով հայ մշակույթի ու արվեստի նկատմամբ այլազգի սովորողների մեջ սեր ու հարգանք ձևավորելն է:
2. Ակադեմիական կրթական միջավայրում սոցիալ-մշակութային մոտեցմամբ ուսուցումը մանկավարժական աջակցության յուրահատուկ դրսևորում է և ուսուցման գործընթացում ներգրավված իրադրային գործոնների ամբողջություն:
3. Ուսուցման և ուսումնառության համատեքստը ենթադրում է դասանյութի ներմուծման և ուսուցման ռազմավարության ճիշտ ընտրություն, կրթական միջավայրի հարմարավետության ապահովում:
4. Արտասահմանցի ուսանողը հայերենը՝ որպես երկրորդ կամ օտար լեզու ուսումնասիրելու ընթացքում գործում է միաժամանակ կրթական, սոցիալական, սոցիալ-մշակութային միջավայրերում: Նշված միջավայրերին ինտեգրվելու, հարմարվելու գործընթացը բազմաշերտ է, և մեկ միջավայրին ինտեգրումը նպաստում է մյուս նշված միջավայրերին ինտեգրմանը: Նշված համատեքստում կրթական միջավայրի դերը վճռորոշ է մյուս միջավայրերի կազմակերպման և ինտեգրման տեսանկյուններից: Կրթական միջավայրի առավելություններից մեկն այն է, որ այն կրում է կազմակերպված բնույթ:
5. Հայերենի՝ որպես երկրորդ կամ օտար լեզվի ուսուցման միջոցով Հայաստանի սոցիալ-մշակութային միջավայրին ինտեգրման կարևոր բաղադրիչ է ակադեմիական հարմարումը, որ ներառում է ակադեմիական կարգավորումը, ճանաչողական և մանկավարժական հարմարումը, լեզվի տիրապետումը:
6. Կրթական համայնքները, հաստատությունները վճռորոշ դեր են կատարում ուսումնառության և ակադեմիական հարմարման գործընթացում, եթե թե՛ դասավանդողների, թե՛ համակուրսեցիների կողմից ցուցաբերվում է աջակցություն օտարերկրացի ուսանողների սոցիալական և վարքագծային հարմարմանը:
7. Կրթական համայնքներում համագործակցային ուսումնառությունը ոչ միայն ակադեմիական առաջադիմությունն է խթանում, այլև սոցիա-

լական հարմարումը հյուրընկալ բուհում: Կրթական միջավայրին ինտեգրվելու կարևոր պայման է նոր կրթական ռեսուրսների ներմուծումը, նոր կրթական տեխնոլոգիաների կիրառումը:

8. Կթական միջավայրի հարմարման կարևոր պայման է տարբեր ռազմավարությունների կիրառումը (ճանաչողական, մտապահման, փոխհատուցման, վերճանաչողական, հուզազգայական, հաղորդակցական): Ուսուցման ռազմավարության ընտրությամբ է պայմանավորված թե՛ կրթական, թե՛ սոցիալական, թե՛ սոցիալ-մշակութային միջավայրերին ինտեգրման արագությունը և արդյունավետությունը:
9. Ուսուցողական նպատակներով տեքստերը կարելի է ընտրել ոչ միայն ըստ դիդակտիկական և մեթոդական սկզբունքների (մատչելիություն, գիտակացականություն, բնագրայնություն, տեղեկատվական հագեցվածություն և այլն), այլև մշակութային և միջմշակութային, հանրամշակութային մոտեցումների տեսանկյուններից: Ընտրվում են տեքստերը նաև ըստ իրենց սոցիալ-մշակութային իրազեկման ներուժի:
10. Սովորողների լեզվական և սոցիալ-մշակութային կոմպետենցիաների ստուգման և գնահատման համակարգը ենթադրում է ստեղծել հայտորոշիչ թեստեր, ներդնել բազմաբաղադրիչ գնահատման համակարգ, ձևավորել ինքնագնահատման մշակույթ, կիրառել Լեզուների ուսուցման համընդհանուր համակարգի (ԼԻՀՀ) ստանդարտները հայերենի ուսուցման գործընթացում, կիրառել ինքնագնահատականի և ձևավորող գնահատականի մեխանիզմները:
11. Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը փաստեց ուսանողների հաղորդակցական հմտությունների բարելավման անհրաժեշտությունը, բացահայտեց հայերեն ուսումնառողների տեսակետները նրանց՝ հաղորդակցական հմտությունները խթանող կամ խոչընդոտող գործոնների, լեզուն յուրացնելու ընդհանրական դժվարությունների և դրանց լուծումների վերաբերյալ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են
հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝**

1. Ավետիսյան Ա. Ս., *Միջմշակութային իրազեկվածությունը և փոխըմբռնումը օտար լեզվի ուսուցման և ուսումնառության գործընթացում*, «Բանբեր», Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(41), Լինգվա, Երևան, 2017, էջեր 179-188:
2. Ավետիսյան Ա. Ս., *Մշակութային գործոնի դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում*, «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(41), Լինգվա, Երևան, 2017, էջեր 190-199:
3. Ավետիսյան Ա. Ս., *Սոցիալ-մշակութային տեսության ներդրումը օտար լեզվի ուսումնառության գործընթացում*, «Բանբեր», Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(45), Լինգվա, Երևան, 2018, էջեր 95-104:
4. Ավետիսյան Ա. Ս., *Լ. Վիգորսկու սոցիալ-մշակութային տեսությունը՝ ուսումնառության և ուսուցման համապեքստում*, «Բանբեր», Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2(45), Լինգվա, Երևան, 2018, էջեր 105-120:
5. Ավետիսյան Ա. Ս., *Սոցիալ-մշակութային տեսության արդյունավետությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում*, «Մանկավարժական միտք», Ուսուցում և դաստիարակություն 1(74), «Ձանգակ» հրատ., Երևան, 2021, էջեր 64-71:
6. Ավետիսյան Ա. Ս. *Օտարերկրացի ուսանողների ուսուցման առանձնահատկությունները Հայաստանի սոցիալ-մշակութային համապեքստում*, «Մանկավարժական միտք», Ուսուցում և դաստիարակություն 1(74), «Ձանգակ» հրատ., Երևան, 2021, էջեր 72-80:
7. Ավետիսյան Ա. Ս., *Օտարերկրացի ուսանողների՝ ՀՀ սոցիալ-մշակութային միջավայր լեզվի միջոցով ինտեգրման բնագավառում առկա հիմնահիմնի հիմնախնդիրների բացահայտումը*, «Մանկավարժական միտք», Ուսուցում և դաստիարակություն 1-2 (78-79), «Ձանգակ» հրատ., Երևան, 2022, էջեր 254-265:

АНАИТ САНДРОЕВНА АВETИCЯН

ИНТЕГРАЦИЯ ИНОСТРАННЫХ СТУДЕНТОВ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНУЮ СРЕДУ АРМЕНИИ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. «Теория и история педагогики». Защита диссертации состоится 16 декабря 2022 г. в 14:00 ч. на заседании действующего при ЕГУ специализированного совета ВАК РА по педагогике 058. Адрес: 0025, г. Еревана, ул.Абовяна 52 а, корпус армянской филологии ЕГУ, аудитория # 203.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Язык и культура имеют ключевое значение в интеграции иностранных студентов в социокультурную жизнь Армении.

Трудности общения иностранных студентов в армянской социокультурной среде свидетельствуют о необходимости изменения содержания образования и общей программы. Актуальность данного исследования обусловлена постоянным увеличением числа иностранных студентов в системе образования РА, необходимостью выполнения требований Закона РА «О языке». Обучение иностранцев в соответствии с социокультурным контекстом Армении преследует не только цель выполнения требований законодательства, но и имеет практическо-прикладное, познавательное и культурное значение.

В этом контексте актуальность исследования заключается в выявлении трудностей, связанных с изучением армянского языка, педагогических условий и способов обучения армянскому языку и создания динамичной модели интеграции иностранных студентов в социально-культурную среду Армении посредством изучения армянского как второго или иностранного языка.

Цель исследования: Выявить особенности, закономерности и трудности интеграции иностранных студентов в социокультурную среду Армении в процессе изучения армянского как второго или иностранного языка предложить возможные решения для развития их коммуникативных, межкультурные, межкультурные компетенции.

Научная новизна исследования. Выявлены особенности интеграции иностранных студентов в социокультурную среду Армении посредством преподавания армянского языка и создана динамическая модель интеграции иностранных студентов в социокультурную среду Армении посредством изучения армянского языка как второго или иностранного языка в социокультурную среду Армении.

Теоретическая значимость исследования.

1. Классифицированы и осмыслены педагогические, особенно дидактические проблемы в области преподавания армянского языка как второго или иностранного языка.

2. Установлена необходимость обучения иностранцев армянскому языку с социокультурным подходом с точки зрения развития коммуникативных, межкультурных компетенций.

3. Выявлены особенности преподавания армянского языка как второго иностранного в виртуальных и не виртуальных образовательных средах с точки зрения социокультурного контекста.

5. Разработана динамическая модель интеграции иностранных студентов в социокультурную среду Армении через преподавание армянского языка как второго или иностранного.

Практическая значимость исследования.

1. Материалы исследования могут быть использованы, в частности, преподавателями армянского языка как иностранного, интересующимися в данной области, в плане формирования общего понимания проблем интеграции иностранцев в социокультурную среду Армении и изучения армянского языка, разработки стратегии в данной сфере. В целом работа может быть полезна всем тем, кого интересует в социокультурном контексте международный исследовательский опыт по овладению вторым языком, вопросы, связанные с аккультурацией иностранных студентов.

2. Результаты исследования могут быть полезны для повышения эффективности процесса обучения армянскому языку иностранных студентов и армян Диаспоры, обучающихся в вузах РА, разработки учебных программ, планов, учебников, предложения педагогам профилактических стратегий в процессе обучения, переподготовки иностранных студентов по изучению армянского языка как иностранного или второго и разработка стратегии преподавания армянского языка в данной области.

Структура и объем работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, 12 таблиц, 4 диаграмм, списка использованной литературы, приложений. Объем работы составляет 128 компьютерных страниц.

ANAHIT SANDRO AVETISYAN

INTEGRATION OF FOREIGN STUDENTS IN THE SOCIO-CULTURAL ENVIRONMENT OF ARMENIA IN THE EDUCATIONAL PROCESS

The dissertation is for the degree of candidate of pedagogical sciences in the specialty 13.00.01, "Theory and history of pedagogy". The thesis defense will be held on December 16, 2022 at 2:00 p.m at the session of the Special Board 058 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) on awarding scientific degrees at Yerevan State University.

Address: 52a Abovyan str., Yerevan, 0025, Yerevan State University, Faculty of Armenian Philology, Lecture room # 203.

SUMMARY

The relevance of the topic. Language and culture are of key importance in the integration of foreign students into the socio-cultural life of Armenia. Difficulties in communication between foreign students in the Armenian socio-cultural environment testify to the need to change the content and general program of language education for foreign students. The relevance of this study is due to the constant increase in the number of foreign students in the RA educational system, and the need to meet the requirements of the RA Law "On Language". The education of foreigners in accordance with the socio-cultural context of Armenia pursues not only the goal of meeting the requirements of the law, but also has practical, applied, cognitive and cultural significance.

In this context, the relevance of the research lies in identifying the difficulties associated with the study of the Armenian language, the pedagogical conditions and ways of teaching the Armenian language, and creating a dynamic model for integrating foreign students into the socio-cultural environment of Armenia through the study of Armenian as a second or foreign language.

The purpose of the research. To identify the features, patterns and difficulties of integrating foreign students into the socio-cultural environment of Armenia in the process of learning Armenian as a second or foreign language,

and to suggest possible solutions for the development of their communicative and intercultural competencies.

Scientific novelty of the research. The study reveals the features of the integration of foreign students into the socio-cultural environment of Armenia through the teaching of Armenian as a second or foreign language, and it creates a dynamic model for this.

Theoretical significance of the research.

1. It classifies and comprehends pedagogical, and especially didactic issues in the field of teaching Armenian as a second or foreign language.
2. It establishes the necessity of teaching foreigners the Armenian language with a socio-cultural approach in terms of the development of communicative and intercultural competencies.
3. It reveals the features of teaching Armenian as a second or foreign language in virtual and non-virtual educational environments from the point of view of socio-cultural context.
5. It has developed a dynamic model for integrating foreign students into the socio-cultural environment of Armenia through the teaching of Armenian as a second or foreign language.

The practical significance of the research.

1. The research materials can be used, in particular, by teachers of Armenian as a foreign language who are interested in this area, in terms of forming a common understanding of the problems faced by foreigners in the socio-cultural environment of Armenia and Armenian language studies, and developing a strategy in this area. In general, the work can be useful to all those who are interested in the socio-cultural context of international research experience in mastering a second language, and issues related to the acculturation of foreign students.
2. The results of the study can be useful for improving the effectiveness of the process of teaching Armenian to foreign students and Diaspora Armenians studying in the universities of the RA, developing curricula, plans, textbooks, offering preventive strategies to teachers in the teaching process, retraining teachers of foreign students in the study of Armenian as a second or foreign language, and developing a strategy for teaching Armenian in this context.

The structure and volume of the dissertation.

The work consists of 128 computer pages. The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, 12 tables, 4 diagrams, a list of used literature, and appendices.

